Մաս 5-ում բերված ցուցանիշներ 1-ից 7 ցուցանիշների համար անհրաժեշտ է կատարել տվյալների ու տեղեկատվության հավաքագրում, փաստաթղթային ուսումնասիրություն կամ դիտարկում-փաստագրում, այնուհետև լրացնել ստորև Աղյուսակ 30-ը:

**Աղյուսակ 30. Տվյալներ հաստատության գործունեությանը սովորողների մասնակցության վերաբերյալ**

<b>Ցուցանիշ</b>	<b>2019-2020 ուստարի</b>	<b>2020-2021 ուստարի</b>	<b>2021-2022 ուստարի</b>
Դեպքերի թիվը, երբ սովորողները մասնակցություն են ունեցել իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից որոշումների կայացմանը	10	15	20

Սովորողների կողմից առաջարկված նոր Նախաձեռնությունների թիվը	7	8	10
Սովորողների կողմից կազմակերպված միջոցառումների թիվը	6	7	9
Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովների, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը	4	4	5

**Նկարագրել, թե ինչպես է տնօրինությունը խթանում է սովորողների  
Նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը**

Պարբերաբար տնօրինության կողմից ուսումնասիրվում է ԱԽ–ի առաջարկությունները, քննարկումներին ներկայացված թեմաները, նրանց հուզող հարցերը և Նախաձեռնությունները: Համագործակցության արդյունքում տրվում է համապատասխան լուծումներ՝ գիտամանկավարժական ուղղվածությամբ իրականացվում է համապատասխան միջոցառումը:

**Սովորողների մասնակցությունը իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ  
տնօրինության կողմից ընդունած որոշումներին և դրանց կայացմանը  
մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը**

Նկարագրել վերջին 3 տարում քննարկված խնդրահարույց հարցերը և ընդունված որոշումները	Ամսաթիվ	Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբանություն
1.6 <sup>ա</sup> դասարանում սովորողների միջև փոխհարաբերությունները:	20.11.202 2	6%	Աշակերտուհու և դասարանի տղաների անհաշտությունը:
2. 3դասարանի սովորողների միասնությունը:	10.02.202 2	9,7%	3-րդ դասարանների միացման հետևանքով առաջացած խնդիրները:

**Սովորողների կողմից առաջարկված նոր Նախաձեռնությունները և  
Նախաձեռնություններին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը**

Նկարագրել վերջին 3	Ամսաթիվ	Մասնակից սովորողների	Մեկնաբանություն
--------------------	---------	----------------------	-----------------

տարում սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները		տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	
1.9-րդ դասարանի սաների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների շարք:	Տարվա ընթացքում	7%	1.Հանդիպում ՀՀպաշտպանության և փոխնախարար Ա. Նազարյանի հետ: 2.Այց Կ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ: 3.Այց համայնքի ավագ դպրոցներ և հ.6 արհեստագործական ուսումնարան:
2.Կազմակերպվել է շաբաթօրյակ Ծիծեռնակաբերդի տարածքում	18.04.2022 2 2.05.2022	18%	Ապահովել շրջապատի մաքրությունը մինչև միջոցառումը և նրանից հետո:
<b>Սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները և միջոցառումներին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.</b>			
Նկարագրել վերջին 3 տարում սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները	Ամսաթիվ	Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Համադպրոցական կանդասարանային
Նկարչական ցուցահանդես	2021-2022 ուստարի	93%	Համադպրոցական կան
Պաստառների ցուցադրում Մեծ եղեռնի 100-ամյա	17.05.2022	51,4%	Համադպրոցական կան

տարելիցի շրջանակում			
Պաստառների ցուցադրում Հայրենական մեծ պատերազմի 70-ամյակի	7.05.2022	7%	դասարանային
<b>Սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը և մասնակցությունն ունեցած սովորողների տոկոսը</b>			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը սովորողների մասնակցության դեպքերը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբանություն
1.Աշակերտի վարքագիծը դասամիջոցին	2021-2022	100%	Աջակցել դասղեկներին, կազմակերպել անվտանգ խաղեր, երաժշտության ունկնդրում:
2.Շփումը համադասարանցու հետ:	2021-2022	48,6%	Չրույցներ, քննարկումներ, երկ-խոսություններ հոգեբանի աջակցությամբ:
<b>Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները և մասնակցությունն ունեցած սովորողների տոկոսը</b>			
Թվարկել վերջին 3 տարում սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները, նշել դրանց թեմաները	Ամսաթիվ	Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբանություն

1.Կլոր-սեղան նվիրված ծխախոտի դեմ պայքարին:	10.10.2022	18%	Կազմակերպել իրազեկման ակցիաներ դպրոցում ծխախոտի վնասակար ազդեցության մասին:
2.Կլոր-սեղան նվիրված բնական աղետների:	5.12.2022	48,6%	Հայաստանի տարածքում հնարավոր բնական աղետների ներկայացում, քննարկում, իրազեկում:

**Նկարագրել սովորող - սովորող և սովորող - ուսուցիչ հարաբերություններն ուսումնական հաստատությունում**

**Սովորող – սովորող** հարաբերությունները կառուցվում են միջանձնային փոխհարաբերությունների առանցքը ընդունելով հավասարությունը, հարգանքը դիմացինի նկատմամբ, լսելու և հասկանալի արտահայտվելու, համագործակցելու, հանդուրժելու, երևույթները օբյեկտիվ վերլուծելու և արդարացի որոշումներ կայացնելու գաղափարը:

**Սովորող – ուսուցիչ** հարաբերությունները կառուցվում են փոխադարձ հարգանքի և բարության մթնոլորտում, համագործակցության դաշտում ապահովելով յուրաքանչյուր երեխայի կրթություն ստանալու իրավունքը և համապատասխան արժեքային համակարգ ստեղծելու պատասխանատվությամբ:

**Աղյուսակ 31.**

**Տվյալներ հաստատության աշակերտական խորհրդի գործունեության վերաբերյալ**

<b>Ցուցանիշ</b>			
<b>Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնված քայլերն ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.</b>			
Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնված քայլերն	Ամսաթիվ	Աջակցություն ստացած սովորողների	Մեկնաբանություն

ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.		թիվը և տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	
1.Ախ կողմից ուսման մեջ խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելու նպատակով կազմակերպվել են լրացուցիչ դասընթացներ՝ դասերից հետո, որոնք անցկացրել են Ախ-ի տվյալ առարկայից բարձր առաջադիմություն ունեցող սովորողը:	2019-2020, 2020-2021, 2021-2022	10%	Նախապես դիտարկման և փաստագրման արդյունքում կազմվել են ուսման մեջ խնդիրներ ունեցող սովորողների ցուցակները, նշվել խնդիրները և կազմակերպել դասընթացներ:
2. Ախ կողմից տարբեր խնդիրներ ունեցող սովորողներին աջակցության ցուցաբերում:	2019-2020, 2020-2021, 2021-2022	9%, 11%, 12%	Բացահայտվել են սովորողների խնդիրները: Կազմակերպվել են սոցիալապես անապահով երեխաներին օգնություն:
<b>Աջակերտական խորհրդի ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով</b>			
Նկարագրել վերջին 3 տարում աջակերտական խորհրդի կողմից ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով	Ամսաթիվ	Աջակցություն ստացած սովորողների թիվը և տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբանություն
1.9-րդ դասարանի աջակերտ Մ.	2021-2022	0,3%	Ախ-ն



<p>Նարեկի հետ զրույց միջադեպի կապակցությամբ, քննարկում և վերլուծություն:</p>			<p>կազմակերպել է հանդիպում Մ. Նարեկի հետ և քննարկել ծագած վեճի պատճառները, լսվել են տարբեր տեսակետներ, մեկնաբանություններ: ԱԽ-ն ներկայացրել է իր գնահատականը:</p>
<p>2. 4-րդ դասարանի աշակերտ Թ.Աբրահամի հետ զրույց միջադեպի կապակցությամբ, քննարկում և վերլուծություն:</p>	<p>2021-2022</p>	<p>0,28%</p>	<p>ԱԽ-ն կազմակերպել է հանդիպում Թ.Աբրահամի հետ և քննարկել ծագած վեճի պատճառները, լսվել են տարբեր տեսակետներ, մեկնաբանություններ: ԱԽ-ն ներկայացրել է իր գնահատականը:</p>
<p><b>Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած միջոցառումները՝ ներառյալ շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, դրանց հաճախականությունը և մասնակից սովորողների տոկոսը</b></p>			
<p>Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած վերոնշյալ միջոցառումները</p>	<p>Ամսաթիվ</p>	<p>Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ</p>	<p>Մեկնաբանություն</p>

<p>1. ԱԽ-ի մասնակցությունը համայնքային, քաղաքային շաբաթօրյակներին:</p>	<p>2019-2020, 2020-2021, 2021-2022</p>	<p>48%, 50%, 52%</p>	<p>ԱԽ-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել համայնքային, քաղաքային շաբաթօրյակներին: Հանդիսանալով նախաձեռնող կողմ ԱԽ-ը իր օրինակով քաջալերել և ոգևորել է մյուս մասնակիցներին:</p>
<p>2. Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառում</p>	<p>2021-2022</p>	<p>70%</p>	<p>Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառման շրջանակում ներկայացվել է երեխաների իրավունքների հռչակագիրը՝ ներկայացվել են հոդվածներ, անցկացվել է կավճանկարչության մրցույթ:</p>

**Նկարագրել աշակերտական խորհրդի գործունեության սկզբունքները և ձևերը՝ համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին**

Դպրոցի ԱԽ-ը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ՝ հաստատության և իր կանոնադրություններով: ԱԽ-ը հաստատած կանոնադրության համապատասխան իրականացվում է սովորողների ինքնավարությունը: ԱԽ-ն ստեղծվել է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան հաստատության գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն

իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտվելու և սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ հաստատության կանոնադրության դրույքները վերահսկելու նպատակով: Այն սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որի գործունեության հիմնական սկզբունքներն են՝ կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը:

Մաս 5-ում բերված 12-ից 20

ցուցանիշների համարանիւրաժեշտ է կատարել տվյալների և տեղեկատվության հավաքագրում, փաստաթղթային ուսումնասիրություն կամ դիտարկում/փաստագրում, այնուհետև լրացնել ստորև նկարագրված 32-ը:

**Աղյուսակ 32**

**Տվյալների հաստատության ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ**

<b>Ցուցանիշ</b>	<b>2019-2020 ուստարի</b>	<b>2020-2021 ուստարի</b>	<b>2021-2022 ուստարի</b>
Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.	4	5	6
Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկոյթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը	15	17	20
Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը	1	2	2
Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուստարվա	9	9	9

ընթացքում			
Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողագուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում		17,8%	18,6%
17,2%			
Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը.		49,8%	51,4%
45,7%			
Ծնողների տոկոսը, որոնք օգտվում են <a href="http://www.dasaran.am">http://www.dasaran.am</a> , <a href="http://ktak.am">http://ktak.am</a> , <a href="http://www.amedu.am">http://www.amedu.am</a> , <a href="http://forum.amedu.am/">http://forum.amedu.am/</a> , <a href="http://lib.amedu.am">http://lib.amedu.am</a> , և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության		78%	84%
		16,4%	20%
		5,1%	10%
		18,3%	
		8,3%	
<b>Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները</b>			
Նկարագրել վերջին 3 տարում սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները	Ամսաթիվ	Առաջարկների քննարկմանը մասնակից ծնողների թիվը	Մեկնաբանություն
1. Դասացուցակը կազմելիս հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները և ծանրաբեռնվածությունը, մասնավորապես 3-5 դասարաններում լեզուները, 5-7-րդ դասարանների դասացուցակում հաշվի առնել պատմողական առարկաների քանակը:	29.10.2022	70ծնող	Հաշվի առնել սաների պայուսակի ծանր լինելու հանգամանքը և երեխաների ֆիզիկական տվյալները:

2.Պարսկերենի լրացուցիչ ժամեր տրամադրման մասին	/2019-2020 2020-2021/ 2021-2022	100ծնող	Դպրոցում հրանի դեսպանատան հովանավորությամբ բացվել է պարսկերենի դասասենյակ: Գույքով և տեխնիկական սարքավորումներով ապահովված լսարանում սովորում են դպրոցի սովորողների մոտ 14,6%:
3.Դպրոցի բուժետուում վաճառվող սննդամթերքի տեսականու բազմազանության ապահովման մասին:	2021-2022	190ծնող	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցի 65 սովորողներ սոցիալապես անապահով ընտանիքներից են և բուժետից օգտվողներից շատերը նույնպես դժվարանում են վճարումներ կատարել, բուժետի տեսականին ընտրել առավել մատչելի:
<b>Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումները՝ (հանդեսներ, հավաքներ, երեկույթներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն, մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը</b>			
Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները	Ամսաթիվ	Մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը	Ծնողական ներդրումների չափը
1. Անվճար դասագրքերի գումարի տրամադրում:	19.12.2022	70ծնող, 7.1%	Սոցիալապես անապահով

			ընտանիքների երեխաների դասագրքերի վճարի 330000դրամի աջակցություն: /Բանկի տեղեկանքը արձանագրությունների մատյանում/
2.Ամանորյա տոներին ընդառաջ կազմակերպված նյութական օգնության մասին:	24.12.2022	50ծնող, 14.2%	Ամանորյա տոներին ընդառաջ կազմակերպվել է նյութական օգնություն սոցիալապես անապահով ընտանիքներին:
3.Ամանորյա տոների ընթացքում իրականացված միջոցառումների մասին:	5.01- 12.01. 2022	50ծնող, 60%	Կազմակերպվել են շրջագայություններ, էքսկուրսիաներ թանգարաններ, պատմամշակութային վայրեր:
<b>Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները</b>			
Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները	Ամսաթիվ	Առաջարկությունների քննարկմանը մասնակից ծնողների թիվը և ուսուցիչներին թիվը, ովքեր ծնողական խորհրդի կողմից առաջարկվել են խրախուսման կամ կարգապահական տույժի	Մեկնաբանություններ

<p>1.Օլիմպիադայի քաղաքային և հանրապետական փուլերում հաղթող սովորողների ուսուցիչներին խրախուսելու մասին:</p>	<p>2021-2022</p>	<p>17 ծնող, 3 ուսուցիչ</p>	<p>ԹալայանԿ., Սարգսյան Մ., Չոհրաբյան Ն. խրախուսվել են Վարդանյան Էդգարի կողմից առարկայական օլիմպիադաներիք աղաքային, հանրապետական փուլերում հաղթելու կապակցությամբ:</p>
<p>2.«Լավագույն ուսուցիչ»-ների խրախուսման մասին:</p>	<p>2020-2021 2021-2022</p>	<p>48ծնող, 2ուսուցիչ</p>	<p>Տարվա «Լավագույն ուսուցիչ»- անվանակարգում խրախուսվել են դպրոցի դասվար Ե. Ջիլավյանը և երգեցողության ուսուցչուհի Զ. Սաֆարյանը:</p>

<p><b>Ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը</b></p>			
<p>Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը</p>	<p>Ամսաթիվ</p>	<p>Մեկնաբանություններ</p>	
<p>1.Ծխ նախազահի ընտրություններ:</p>	<p>2019-2020, 2020-2021, 2021-2022 սեպտեմբեր</p>	<p>Առաջնորդվելով Ծխ կանոնադրության դրույթներով իրականացվել է փակ գաղտնի քվեարկություն և ընտրվել է Ծխ նախազահ:</p>	
<p>2.Ուստարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրերի</p>	<p>2019-2020, 2020-2021, 2021-2022</p>	<p>Տնօրինության կողմից ներկայացված ծրագիրը հավանության է արժանացել:</p>	

Նախագծի վերաբերյալ կարծիք տալու մասին:	սեպտեմբեր	
3.Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ծնողների մասնակցության մասին:	2021-2022 հոկտեմբեր	Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքները կազմակերպվել են հաշվի առնելով սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության փաստացի վիճակը, ներկայացվել են մի շարք առաջարկներ տնօրինությանը:

**Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողներին տրամադարվող աջակցությունը, դրանց ձևերը**

Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողներին տրամադարվող աջակցության դեպքերը և դրանց ձևը	Ամսաթիվ	Ծնողների կողմից ներդրված գումարի չափը	Մեկնաբանություններ
1. 2014-2015 ուստարվան Նախապատրաստական աշխատանքների աջակցության մասին:	30.08.2022	20 ծնող, 10%	Սոցիալապես անապահով սովորողներին տրամադրվել է գրեական պիտույքներ և հագուստ:
2. Ամանորյա տոներին ընդառաջ կազմակերպված նյութական օգնության մասին:	24.12.2022	50 ծնող, 14.2%	Ամանորյա տոներին ընդառաջ կազմակերպվել է նյութական օգնություն սոցիալապես անապահով ընտանիքներին: Կազմակերպվել է այց Հուլյսի ավան:
3. Փարոսակիր ընտանիքների դպրոցում սովորող երեխաների ամառային հանգստի	21.05.2022	17 ծնող, 1,2%	Ներկայացվել է դպրոցի տնօրենին 5 սովորողների ցուցակ /8-12 տարեկան/,



կազմակերպման մասին:			որպեսզի նրանց հանգիստը կազմակերպվի համայնքի հովանավորությամբ ամառային ճամբարում:
---------------------	--	--	--

**Նկարագրել ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցությունը և դրա ձևերը**

-Ծխ ներկայացուցիչները իրենց նախաձեռնությամբ և ԱԽ-ի հրավերով մասնակցում են ԱԽ ընդհանուր ժողովին, ինչպես նաև հերթական նիստերին:

-Ծխ-ն աշակցում է աշակերտների արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը:

- Ծխ-ն խորհրդատվական օգնություն է ցուցաբերում ԱԽ-ի տարեկան աշխատանքային պլանը կազմելիս:

-Ծխ-ն և ԱԽ-ն մասնակցում են ծնողազուրկ և օգնության կարիք ունեցող երեխաների հաշվառմանը՝ նրանց կյուրական օգնություն ցուցաբերելու աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացում:

-Ծխ-ն և ԱԽ-ն պաշտպանում են երեխաների իրավունքները դպրոցում:

-Ծխ-ն և ԱԽ-ն նպաստում են դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների պահպանմանը:

-Ծխ-ն ԱԽ-ի հետ համատեղ բացահայտել է աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման թերացումները և առաջադիմությունները, կազմակերպվել են քննարկումներ և ներկայացվել առաջարկություններ:

**Նկարագրել ուսումնական հաստատության առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը**

Ուսումնական հաստատության առօրյայի և տեղի ունեցող իրադարձությունների մասին ծնողները պարբերաբար տեղեկացվում են: Դպրոցում սեպտեմբերից-մայիս ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը անցկացվել է բաց դռների օր, որին ակտիվորեն մասնակցում են թե՛ ծնողները, թե՛ ուսուցիչները: Դպրոցի 1-ին հարկում հայտարարությունների վահանակի վրա պարբերաբար փակցվել են հայտարարություններ, իսկ «Մեր առօրյան» պաստառը մշտապես ապահովել է ծնողների տեղեկացվածությունը:

**Ծնողների ներգրավվածությունը. սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին, ներգրավվածության ձևերը**

Նկարագրել արտադպրոցական և արտադասարանական	Ծնողների մասնակցության	Ծնողների ներդրումների	Մեկնաբանություններ
---	------------------------	-----------------------	--------------------

աշխատանքները, որոնց մեջ վերջին 3 տարում ծնողները ներգրավված են եղել	ձևերը և մասնակից ծնողների թիվը	չափը	
1.«Գիտելիքի և դպրության օր»	Աջակցություն,	Օդրամ	Դպրոցի բակի և առաջին դասարանների ձևավորում:
2.Ամանորյա տոների ընթացքում իրականացված միջոցառումների մասին:	5.01-12.01. 2022, աջակցություն, 17 դասարաններ 34 ծնողներ,	Օդրամ	Կազմակերպվել են շրջագայություններ, էքսկուրսիաներ թանգարաններ, պատմամշակութային վայրեր: Ծնողները ապահովել են փոխադրամիջոց և անհրաժեշտության դեպքում սնունդ:
3.«Այբբենարանի հանդես»30.04.2022, 7.05.2022 և «Վերջին դաս» 22.05.2022 միջոցառումների մասին:	աջակցություն,46 ծնող, աջակցություն, 24 ծնող	Օդրամ  Օդրամ	«Այբբենարանի հանդես»-ին ծնողները ձևավորել են դասասենյակները, իսկ «Վերջին դաս»-ին՝ դահլիճը:
4.«Երեխաների իրավունքների պաշտպանության օր»	Աջակցություն, 70 ծնող	Օդրամ	Դպրոցի բակի ձևավորում:
<b>Թվարկել կայքերը, որոնցից օգտվում են ծնողները, օրինակ՝ <a href="http://www.dasaran.am">http://www.dasaran.am</a>, <a href="http://ktak.am">http://ktak.am</a>, <a href="http://www.armedu.am">http://www.armedu.am</a>, <a href="http://forum.armedu.am/">http://forum.armedu.am/</a>, <a href="http://lib.armedu.am">http://lib.armedu.am</a>, հաստատության կայք և այլն, մեկնաբանել դրանց անհրաժեշտությունը և օգտակարությունը</b>			
Կայքը	Ամսաթիվ	Օգտվող ծնողների թիվը	Մեկնաբանություն

1. <a href="http://www.dasaran.am">http://www.dasaran.am</a>	1.09.2019- 22.05.2020	115	Մանկավարժի և ծնողի կապի ապահովում:
2. <a href="http://ktak.am">http://ktak.am</a>	1.09.20- 22.05.2021	70	Իրազեկում, տեղեկատվություն:
3. <a href="http://www.armedu.am">http://www.armedu.am</a>	1.09.2021- 22.05.2022	35	Իրազեկում, տեղեկատվություն:

**Աղյուսակ 33. Տվյալներ հաստատության և համայնքի համագործակցության վերաբերյալ**

<b>Ցուցանիշ</b>			
<b>Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնական բազայի համալրման աշխատանքների համայնքի մասնակցությունը, մասնակցության ձևը և այդ գործում կատարված ներդրումները.</b>			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցության դեպքերը, մասնակցության ձևերը	Ամսաթիվ	Ներդրման չափը	Մեկնաբանություն
1.-	-	-	-
2.-	-	-	-
....			
<b>Նկարագրել համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածության աստիճանը</b>			
....			
<b>Ուսումնական հաստատության մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը</b>			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության համայնքի աշխատանքներին մասնակցության դեպքերը և դրանց ձևերը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների և աշխատողների տոկոսը	Մեկնաբանություն
1. Շաբաթօրյակներ	Գարնա	62%	

	Նը,աշն անը		
2.Տոնակատարություններ	Տոնակ ան օրերին	100%	
3 Ծառատունկ .	Գարնա նը, աշնանը	53%	

**Ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները.**

Նկարագրել վերջին 3 տարում հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները, նշել դրանց թիվը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների ու աշխատողների տոկոսը և համայնքի բնակիչների թիվը	Մեկնաբանություն
1			
2.			
....			

**Համայնքի բնակիչները օգտվում են հաստատության մարզադահլիճից, ինտերնետից, գրադարանից և այլ հնարավորություններից**

Նկարագրել, թե հաստատության ինչպիսի ծառայություններից են օգտվում համայնքի բնակիչները	Հաճախականությունը՝ ամսեկան կամ տարեկան կտրվածքով	Օգտվող բնակիչների թիվը	Մեկնաբանություն
1.Մարզադահլիճից	Ամիսը 7-ից 8 անգամ	40-50	
2.Ինտերնետից	Ամիսը 3-ից 4 անգամ	50-80	
....			

**Ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների(ՀԿ) հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակից սովորողների թիվը՝ ըստ ծրագրերի**

Նկարագրել վերջին 3 տարում հաստատությանը և ՀԿ-ների համատեղ իրականացված կրթական բոլոր ծրագրերը	Ծրագրի տևողությունը	ՀԿ –ի անվանումը	Մասնակից սովորողների թիվը
1.Ներառական կրթությունը դպրոցում	1 շաբաթ	.<<Հոլյսի կամուրջ>>	
2.ԿԱՊԿՈՒ աշակերտի ծնողը որպես աջակցող թիմի անդամ	1 շաբաթ	.<<Հոլյսի կամուրջ>>	
3.Հանրակրթության օրենքը համընդհանուր ներառման մասին	1 շաբաթ	.<<Հոլյսի կամուրջ>>	
		.<<Քայլ առ քայլ>>	

**Աղյուսակ 34. ՈՒԹՀԿ վերուժության**

<p><b><i>Ուժեղ կողմեր</i></b></p> <p>1. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր՝ տարանջատելի վարչական, ուսումնասօժանդակ և ուսուցչական կազմը</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>2.Սովորողների ուսումնառության և այլ գործունեության ուժեղ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհուրդի, այլ մարմինների գործունեության ուժեղ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> </ul>	<p><b><i>Թույլ կողմեր</i></b></p> <p>1. Աշխատակազմի գործունեության թույլ կողմեր՝ տարանջատելի վարչական, ուսումնասօժանդակ և ուսուցչական կազմը</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>2.Սովորողների ուսումնառության և այլ գործունեության թույլ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհուրդի, այլ մարմինների գործունեության թույլ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> </ul>
---	---

<ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>4. Ռեսուրսներով ապահովվածությունը</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>6. Հաղորդակցության, համագործակցության ուժեղ կողմերը</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված հաջողությունները</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>4. Ռեսուրսներով ապահովվածության խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ թույլ կողմերը</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>6. Հաղորդակցություն, համագործակցություն</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul> <p>7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված դժվարությունները և խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> <li>• ...</li> <li>• ...</li> <li>• ...</li> </ul>
<p>Հնարավորություններ 1...</p>	<p>Վտանգներ 1...</p>

2...	2...
3...	3...
4...	4...
5...	5...
.....	.....

Աղյուսակ 34-ը պետք է լրացնել՝ դասակարգելով ուժեղ կողմերը, թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ առաջնահերթությունների: Այնուհետ հաշվի առնելով բոլոր գործոնները և ելնելով նախանշված իրատեսական նպատակներից և խնդիրներից՝ մշակել ռազմավարություն և ձեռնարկվող միջացառումներ:

**Չավելված 2. Հարցումների իրականացման առաջարկվող մեթոդաբանություն**

Ուսումնական հաստատության գործունեության ինքնավերլուծությունը կատարելիս մի շարք ցուցանիշներին և չափանիշներին համապատասխանության գնահատման համար անհրաժեշտ է իրականանցնել հարցումներ: Առաջարկվում է հարցումների ստորև նկարագրված մեթոդաբանությունը:

1. Հաստատության կողմից ինքնավերլուծություն կատարելիս հարցման մեթոդն օգտագործվում է, երբ ցուցանիշների և չափանիշների աղյուսակում տվյալ ցուցանիշի կամ չափանիշի գնահատման մեխանիզմ սյունակում նշված է «հարցում» բառը: Հարցումը առավել տարածված սոցիոլոգիական հետազոտության մեթոդներից է: Հարցման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հետազոտության ժամանակ կարևորը ընդհանրական պատկերի սատցումն է, այլ ոչ թե առանձին հարցվողի տեսակետը: Սրանով հարցման մեթոդը տարբերվում է հարցազրույցից, երբ կարևոր է հենց հարցազրույց տվող անձի տեսակետը:
2. Հարցումներն անցկացվում են տվյալների հավաքման և վերլուծության նպատակով՝ նախապես մշակված հարցաթերթիկների միջոցով (անկետավորում): Հարցաթերթիկը կառուցված է.

- նախաբանից, որտեղ համառոտ նշվում է հարցման նպատակն ու խնդիրները,
- ում կողմից է անցկացվում հարցումը (տվյալ դեպքում հաստատության տվյալները),
- հարցաթերթիկի լրացման կանոններից, որտեղ նշվում է, թե ինչպես պետք է լրացնել հարցաթերթիկը,
- բուն հարցաշարից, որտեղ նշվում են հարցման թեմային վերաբերվող հարցերը

-անձնագրային մասից, որտեղ նշվում է հարցվողի սեռը, տարիքը, կրթությունը և ըստ անհրաժեշտության այլ անձնական տվյալներ:

3. Հարցերը լինում են բաց, փակ, և կիսափակ: Բաց հարցերը չեն ենթադրում պատասխանների տարբերակների առկայություն: Փակ հարցերի պարագայում պատասխանները նախօրոք նախատեսված և բերված են հարցաթերթիկում՝ հնարավորություն տալով հարցվող անձին ընտրել պատասխանը հնարավոր տարբերակներից: Կիսափակ հարցերը թույլ են տալիս նշել սեփական պատասխանը, եթե առաջարկված ոչ մի պատասխանի հետ հարցվողը համաձայն չէ: Կիսափակ, ինչպես և բաց հարցերը ավելի դժվար է մշակել, քան փակ հարցերը, քանի որ անձնական կարծիք արտահայտող պատասխանները անհրաժեշտ է խմբավորել և կողավորել:
4. Ուստի հաստատությանը խորհուրդ է տրվում բացառել բաց հարցերը և օգտագործել միայն փակ հարցեր: Խիստ սահմանափակ դեպքերում, երբ շատ կարևոր է հարցվողների տեսակետը կամ մեկնաբանությունը կարելի է հարցաթերթիկում ընգրկել նաև կիսափակ հարցեր:
5. Հարցումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է խմբավորել հարցում պահանջող ցուցանիշները և չափանիշները՝ ըստ հարցվողների խմբերի (օրինակ ուսուցիչներ, սովորողներ, ծնողներ և այլն) և յուրաքանչյուր խմբի համար կազմել մեկ հարցաթերթիկ՝ ներառելով այդ խմբին վերաբերող բոլոր ցուցանիշներին և չափանիշներին վերաբերող հարցերը:
6. Առաջարկվում է հարցաթերթիկներում ներառել առավելագույնը 5 հարց: Հարցերը անհրաժեշտ է ձևակերպել այնպես, որ հաստատության համապատասխանությունը տվյալ ցուցանիշին կամ չափանիշին լավագույնս բացահայտվի: Օրինակ՝ հարցի դասական ձևակերպումը կարող է սկսվել. «Համաձայն ե՞ք, որ...». (շարունակությունը կազմում է հարցի բովանդակությունը), իսկ հաճախ օգտագործվող տիպային պատասխանները՝ «Այո, ավելի շուտ այո, ավելի շուտ ոչ, ոչ, չեմ կարող պատասխանել, տեղյակ չեմ»: Կարող են օգտագործվել նաև այլ հարցադրումներ և պատասխաններ. օրինակ՝ «Որքա՞ն հաճախ եք դուք...», «Որքանով կամ ինչ չափով ե՞ք դուք բավարարված...», «Որաքնով է նպաստել...» (շարունակությունը կազմում է հարցի բովանդակությունը)<sup>3</sup>:
7. Հարցաթերթիկում կարող են ներառվել նաև դիրքորոշում կամ վերաբերմունք արտահայտող պատասխաններ ունեցող հարցեր: Օրինակ՝ «Ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցությունը» չափանիշի վերաբերյալ կարելի է տալ հետևյալ հարցը, «Ինչպիսի՞ն է

<sup>3</sup> Հարցերի կազման համար կարող եք ուղղակիորեն տարբեր աղբյուրներից, օրինակ <https://ru.surveymonkey.com/mp/education-surveys/> կայքից



հաստատության ծնողական և աշակերտական խորհուրդների միջև համագործակցությունը»:  
Այս հարցի հնարավոր պատասխանները կարող են լինել հիևզը, որոնցից յուրաքանչյուրն ամրագրում է հարցի վերաբերյալ հնարավոր դիրքորոշումներից մեկը.

- ծնողական և աշակերտական խորհուրդները սերտորեն համագործակցում են,
- ծնողական և աշակերտական խորհուրդները համագործակցում են անհրաժեշտության դեպքում,
- ծնողական և աշակերտական խորհուրդները որոշ դեպքերում համագործակցում են, սակայն այդ համագործակցությունը բավարար մակարդակի վրա չէ
- ծնողական և աշակերտական խորհուրդները չեն համագործակցում,
- այլ (հարցվողի պատասխանը)

8. Որակյալ և արժանահավատ հարցում իրականացնելու համար անհրաժեշտ է պահպանել հարցեր կազմելու հետևյալ կանոնները.

- պահպանել էթիկայի նորմերը և ապահովել անձնական բնույթի տեղեկատվության կոնֆիդենցիալությունը (զաղտնիությունը), որպեսզի հարցվողները չմտահոգվեն հարցերին ճիշտ պատասխանելու հնարավոր հետևանքներից և լինեն անկեղծ,
- հարցաթերթի յուրաքանաչյուր հարց պետք է պարունակի միայն մեկ հարցադրում. օրինակ՝ «Որքանով եք դուք բավարարված ուսուցչի գիտելիքներից և դասավանդման հմտություններից» հարցը պարունակում է միաժամանակ 2 հարցադրում և փորձում է բացահայտել թե՛ ուսուցչի գիտելիքները, թե՛ դասավանդման հմտությունները.
- հարցաթերթի յուրաքանաչյուր հարց պետք է ներառի պատասխանի բոլոր հնարավոր տարբերակները և ապահովի պատասխանների տարատեսակություն.
- հարցաթերթի յուրաքանաչյուր հարցի պատասխանների տարբերակները պետք է լինեն փոխբացառող և ապահովեն իմաստալից տեղեկատվության տրամադրում, որպեսզի հարցվողը չտարակուսի որն ընտրել և ունենա միայն մեկ ընտրություն. Օրինակ՝ «Որտեղ եք դուք մեծացել».

ա)Չայաստանում

բ)Քաղաքում

գ)Գյուղում

հարցը ստեղծում է տարակուսանք, քանի որ պատասխանները փոխբացառող չեն. թե՛ քաղաքում, թե՛ գյուղում մեծացած անձը կարող է ընտրել 2-ական պատասխան՝ համապատասխանաբար ա) և բ) կամ ա) և գ), իսկ ստացվող տեղեկություններն օգտակար չեն:

9. Հարցաթերթիկում հարցերը համարակալվում են: Լրացված հարցաթերթիկների մշակումը կատարվում է համակարգչի միջոցով՝ համապատասխան ծրագրով (օրինակ՝ Excel): Հարցերի պատասխաններն իրենց հերթին համարակալվում են: Հարցման արդյունքների մշակման, պատասխանների մուտքագրման համար հարցերի հերթական համարները հարցաթերթիկում կարող են ընդունվել որպես այդ հարցերի կոդեր, իսկ հարցերի պատասխանների համարները՝ որպես պատասխանների կոդեր: Յուրաքանչյուր լրացված հարցաթերթիկ ևս համարակալվում է:
10. Լրացված հարցաթերթիկների տվյալները մուտքագրվում են ընտրված համակարգչային ծրագրով և ստեղծվում է տվյալների բազա: Բազայում մուտքագրվում են հարցերը և պատասխանները՝ իրենց համապատասխան կոդերով: Այսպիսով, մուտքագրման արդյունքում ստացվում են թվեր, որոնք կարելի է կարդալ որպես օրինակ՝ 1. 1. 3, այսինքն առաջին հարցվածը առաջին հարցին տվել է երրորդ պատասխանը: Մեր վերը բերված օրինակի համար սա նշանակում է, որ առաջին հարցվածը ընտրել է «ծնողական և աշակերտական խորհուրդները որոշ դեպքերում համագործակցում են, սակայն այդ համագործակցությունը բավարար մակարդակի վրա չէ» պատասխանը: Բոլոր տվյալների մուտքագրումից հետո կատարվում է հաճախությունների հաշվարկ, ինչը թույլ է տալիս տեսնել, թե ինչպես են բաշխվել հարցվածների կարծիքները՝ ըստ հարցաթերթիկում տրված պատասխանների տարբերակների:
11. **Հարցվողների ընտրանքը** կազմելու, այսինքն՝ **հարցման ենթակա անձանց որոշելու** համար, առաջին հերթին անհրաժեշտ է որոշել հարցման ենթակա շահառու անձանց խումբը (սովորողներ, ուսուցիչներ և այլ): Այնուհետ հարցման կարևոր փուլ է՝ տվյալ շահառու խմբի անձանց ամբողջ բազմությունից հարցման ենթակա անձանց ընտրությունը կամ, այլ կերպ ասած, հարցվողների ընտրանքի կազմումը: Օրինակ՝ հաստատության բոլոր ուսուցիչներից հարցվող ուսուցիչների ընտրությունը՝ այն ուսուցիչների ընտրությունը, ովքեր պետք է լրացնեն հարցաթերթը:
12. Հարցման ընտրանքի կազմման համար առաջարկվում է կիրառել **պատահական ընտրանքի մեթոդը**: Ստատիստիկայում **պարզ պատահական ընտրանքը** դա այն անձանց փոքր խումբն է, ովքեր ընտրվել են անձանց ավելի մեծ բազմությունից: Ընդ որում, յուրաքանչյուր անձ այդ փոքր խմբում ընտրվել է պատահականորեն: Դա նշանակում է, որ ընտրանքի

կազմման ժամանակ յուրաքանչյուր անձ ունի ընտրանքում ընդգրկվելու հավասար հավանականություն: Պարզ պատահական ընտրանքի մեթոդն ունի ակնհայտ առավելություններ: Այս մեթոդը շատ հեշտ է ու հասկանալի, իսկ հետազոտության արդյունքները կարելի է տարածել ուսումնասիրվող շահառու խմբի ամբողջ բազմության վրա: Ամենից կարևորն այն է, որ լիովին պահպանվում է պատահականության սկզբունքը, ինչը թույլ է տալիս խուսափել սխտեմատիկ սխալներից:

13. Պատահական ընտրանքի մեթոդով ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը, որոշելու համար առաջարկվում է օգտագործել ընտրանքի հաշվարկման պարզեցված բանաձևը:
14. Հաստատություններին որպես օգնություն ստորև աղյուսակում 33-ում տրված է պատահական ընտրանքի պարզեցված բանաձևով հաշվարկված ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը, տարբեր բազմությունների համար (հաշվարկը արված է պատահական ընտրանքի հիման վրա՝ 95 տոկոս ներկայացուցչականության պարագայում, 5% վստահելի միջակայքի պայմաններով)։

### Աղյուսակ 35.

Հարցման բազմություն	Ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը
Մինչև 100	80
101-300	169
301-500	<b>217</b>
501-700	248
701-1000	278
1001 և ավելի	302

15. Ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը, որոշելուց հետո անհրաժեշտ է որոշել, թե ինչպես ընտրել հարցվող անձանց, օրինակ՝ ինչպես հաստատության 100 սովորողներից ընտրել հարցվող 80 սովորողին: Պատահական ընտրանքի պարագայում կարելի է օգտագործել տարբեր մեթոդներ, օրինակ՝ **վիճակահանություն կամ պատահական թվերի աղյուսակ**: Վիճակահանության դեպքում է հարցման ենթակա շահառու խմբի անձանց ամբողջական բազմության յուրաքանչյուր անձի տվյալները գրվում են առանձին թղթիկի վրա, այնուհետ բոլոր թղթիկները դրվում են ինչ-որ արկղի կամ տուփի մեջ, դրանք խառնում են և այդ տուփից առանց նայելու հանվում են հարցվողների թվին հավասար թղթիկներ: Օրինակ՝, եթե հաստատությունն ունի 500 սովորող, ապա համաձայն Աղյուսակ 33-ի հարցվող սովորողների թիվը պետք է կազմի 217: 500 սովորողից յուրաքանչյուրի տվյալները (անուն, ազգանուն,

հայրանուն, դասարան) գրվում է առանձին թղթիկի վրա: Այնուհետև բոլոր 500 թղթիկները դրվում են որևէ տուփի մեջ, խառվում և հավում է 217 թղթիկ: Այդ 217 թղթիկների վրա գրված սովորողների տվյալներով որոշվում են հարցվող սովորողները:

16. Հարցվող անձնաց կարելի է ընտրել նաև **մեխանիկական ընտրության մեթոդով**: Այդ նպատակով նախ կազմվում է հարցման ենթակա շահառու խմբի անձանց ամբողջական ցանկը (անուն, ազգանուն, հեռախոս և այլն): Այդ ցանկից հավասար պարբերականությամբ/միջակայքով ընտրվում են համապատասխան թվի հարցվողներ: Այդ միջակայքը կոչվում է ընտրանքի քայլ: Ընտրանքի քայլը հավասար է հարցման բազմությունը բաժանած հարցվողների թվին:

Ընտրանքի քայլ= $N/n$ , որտեղ

$N$ -ը հարցման բազմությունն է, իսկ  $n$ -ը հարցվողների թիվը:

Օրինակ եթե 500 սովորողից պետք է հարցվեն 217-ը, ապա հարցման քայլը հավասար է  $2.3=500/217$ : Սա նշանակում է, որ 500 սովորողների ցանկից պետք է ընտրվի յուրաքանչյուր 2-րդը: Ընտրության սկիզբը որոշվում է պատահականության սկզբունքով՝ ընտրանքի քայլի շրջանակներում: Օրինակ՝, եթե ընտրանքի քայլը հավասար է 5-ի, ապա ընտրությունը պետք է սկսել 1-ից 5 միջակայքում ցանկացած թվից:

---